



YEGHISHE CHARENTS

Եղիշե Չարենց

The Armenian Poets in Songs
Les Poètes Arméniens en Chansons 1
Հայ Բանաստեղծները՝ Երգերում

This album is a tribute to Yeghishé Charents' 100th Anniversary

The Armenian Poet

The Armenian poet Yeghishé Charents was born in Kars, a provincial Armenian city under the rule of Imperial Russia. At seventeen, already author of published poems, he joined an Armenian volunteer army to fight against the Turks for the liberation of his people. He witnessed the calamities of World War I, and the extermination of his countrymen in 1915 by the Ottoman Government. The outcome of his bitter

In 1916, he went to Moscow to pursue his literary endeavors. Fascinated by the October Revolution of 1917, he fought with the Red Army in the Russian and Armenian Civil wars. He became, along with Mayakovsky, the poet of the Russian Revolution. It is said that Stalin was one of Charents' admirers.

In 1922, after the establishment of Soviet rule in Armenia, Charents went back to Moscow seeking a higher education. As a member of the entourage of avant-garde Russian poets, he assimilated the world literature, he discovered its new trends, and translated, among others, Poe, Whitman, Pushkin, Goethe and Baudelaire. Later on, spending two years in France, Germany and Italy, he witnessed the new atmosphere of the artistic movements of the 1920s. By 1926, he was the most celebrated poet in Armenian literature, whose poetry was in constant experimentation regarding language, form of expression, versification and genre.

In 1934 his *"Book of the Road"* appeared; one of the poems, *"The Message,"* contained an acrostic: *"Armenian people, your only salvation lies in your united strength."* The book was banned, and Charents was severely criticized for his nationalism. The works he wrote afterwards were never published while he was alive. He was arrested in 1937, and died under mysterious circumstances in a KGB cell the same year. His unpublished manuscripts remained buried underground until Stalin's death in 1955.

Charents' creative life was a continuous chain of inner change and growth. Having traversed the path of extremely complex literary directions – symbolism, revolutionary romanticism, futurism, realistic monumentalism, neoclassicism, existentialism – Charents took the development of Armenian literature to the edge of latest achievements of the century's artistic thought. This exceptional talent occupies a unique place in the history of the 20th century Armenian literature.

Le Poète Arménien

Le Poète Arménien Yeghishé Tcharents est né à Kars, ville provinciale d'Arménie sous l'autorité de la Russie Impériale. En 1915, auteur déjà publié de poèmes, il rejoint un bataillon de volontaires arméniens pour combattre les Turcs et lutter pour la libération de son peuple. Il devient le témoin des calamités de la première guerre mondiale et du génocide de ses compatriotes par le pouvoir ottoman. Il donne corps à l'amertume de ses impressions dans le poème *«Légende Dantesque»*, qui le rend célèbre à dix-neuf ans. Fasciné par la révolution d'Octobre, il prend part, aux côtés de l'Armée Rouge, à la guerre civile en Russie et en Arménie. Tcharents devient, avec Maïakovsky, le poète de la révolution russe. Staline, dit-on, était l'un de ses admirateurs.

En 1922, après l'instauration du régime soviétique en Arménie, Tcharents retourne à Moscou pour entreprendre des études supérieures. Familier des poètes de l'avant-garde russe, il découvre la littérature mondiale et ses nouvelles orientations. Il traduit, entre autres, Poe, Whitman, Pouchkine, Goethe et Baudelaire. Il passe les années 1925 et 1926 en France, en Allemagne et en Italie, où il s'imprègne des mouvements artistiques des années 20. A partir de 1926, il est considéré comme le poète le plus célèbre de la littérature arménienne. Sa poésie est une expérimentation constante sur le plan de la langue, de la forme de l'expression, de la versification et du genre.

En 1934 paraît le *«Livre de la voie»* dont l'un des poèmes, *«Le Message»* compose l'acrostiche: *"Peuple arménien, ton seul salut se situe dans ta force collective"*. Le livre est censuré, et Tcharents sévèrement critiqué pour son nationalisme. Les œuvres qu'il écrit par la suite n'ont pas été publiées de son vivant. Arrêté en 1937, il meurt la même année, dans des circonstances mystérieuses, dans une cellule de KGB. Ses manuscrits sont restés enterrés jusqu'à la mort de Staline, en 1955.

L'œuvre de Tcharents porte l'empreinte des vicissitudes de sa vie intérieure, et ayant traversé les mouvements littéraires les plus complexes de son époque, elle est marquée par le symbolisme, le romantisme révolutionnaire, le futurisme, le monumentalisme réaliste, le néoclassicisme et l'existentialisme. Tcharents a porté la littérature arménienne au sommet de la pensée artistique du siècle. Son talent exceptionnel occupe une place particulière dans la littérature arménienne du XXème siècle.

Եղիշե Չարենց

Հայ Բանաստեղծները՝ Երգերում

This album is a tribute to Yeghishe Charents' 100th Anniversary

ԽԵՂԿԱՏԱԿ

Ու գինու պես քո հոգին
Հորդ կթափվի նրանց մութ
Ու մահահոտ հատակին:
Խրախճանք», բալլադ 1-ին

Կո՞ւզեք - երգեմ՝
Ձեզ համար,
Հիմա:
Այնպես երգեմ, որ զգաք -
Ինչ որ կուզեք, կուզեք - սեր,
Կուզեք - մահ:

Ես երգում եմ, որ հուզեմ.
Տալիս եմ երգս լուսե
Ու՛ն որ կուզեք. թեկուզ նա
Լինի պորոնիկը վերջին.
Դուր չի՞ գալիս ձեզ միթե
Այս քնքշությունը -
Արջի:

Ես երգում եմ ակամա:
Ինչ էլ երգեմ. կուզեք - սեր,
Կուզեք - մահ: -
Բայց չե՛մ կեղծում ես երբեք:

Լսե՛ք երգերս -
Սիա -
Լսե՛ք երգերս, բայց թե -
Չհարբեք:
Ես չեմ ուզում, որ հարբեք.
Լավ չէ, գիտե՞ք, երբ մի
Անհուն կարոտ դառնում է քաղցր
Քամի...

Չե՞ք հասկանում:
Իզուր, իզուր: Դուք պե՛տք է որ
Հասկանաք:
Թռչե՛լ է պետք. սակայն ո՞ւր: -
Չե՞ք հասկանում. ես կուզեմ,
Որ իմ երգերը
Լուսե -
Ձեզ թուղթ թվան ու թանաք:
Չե՞ք հասկանում- Դուք պե՛տք է որ
Հասկանաք:

Ուրիշ - ոչինչ:
Ու հիմա -
Նու՛յնն է նորից. ես երգում եմ, որ հուզեմ:
Ես երգում եմ - ակամա:
Ինչ էլ երգեմ. կուզեք - սեր,
Կուզեք - մահ:

Ես - խեղկատակ եմ հիմա...

1920

BUFFOON

"And your soul like wine
Will inundate their black
And morbid floor."
The Feast, Ballad I

Would you like me to sing
For you
- Now?
I sing so that you feel
Whatever you want -
Be it love or death.
I sing to move your hearts.
I give my song of light
To you all,
Even to the last whore.
Do you like at all
This bearish tenderness
Of mine?

I sing despite myself.
Whatever I sing - whether about love,
Or death,
It is never fake.

Listen to my songs,
Here they are:
Listen but don't get
Drunk.
I don't want you to get drunk.
It is not good, you know,
When an infinite yearning turns into a cloying
Breeze.

Don't you understand?
Alas, alas - but you must
Understand.
We need to fly? - but where to?
Don't you understand?
I want my luminous
Songs
To seem like paper and ink to you.
Don't you understand?
But you must!

Nothing else.
And now
It's the same again
I sing to move your hearts.
I sing despite myself.
Whatever I sing - be it love
Or death.

I am a buffoon now.

1920

YEGHISHE CHARENTS

*The Armenian Poets in Songs
Les Poètes Arméniens en Chansons*

This album is a tribute to Yeghishe Charents' 100th Anniversary

BOUFFON

"Et ton âme comme du vin
Se répandra sur leur plancher
Impur et morbide".
Festin, Ballade I.

Voulez-vous que je chante
Pour vous,
Là?
Afin que vous ressentiez!
Ce que vous voulez - que ce soit l'amour,
Ou la mort.
Je chante pour vous émouvoir.
Je donne ma chanson lumineuse
A n'importe qui, même si
C'est la dernière des putains.
Ne vous plaît-elle pas
Cette tendresse
D'ours?

Je chante malgré moi.
Quoi que je chante - que ce soit l'amour,
Ou la mort,
Je suis toujours sincère.

Écoutez mes chansons -
Les voilà -
Écoutez-les, mais
Ne vous en soûlez pas.
Je ne veux pas vous enivrer,
Vous savez, ce n'est pas bon
Quand une nostalgie profonde
Se transforme en une douce brise.

Vous ne comprenez pas?
Tant pis, tant pis. Vous devez
Me comprendre.
Il faut s'envoler - mais où?
Vous ne comprenez pas? je veux
Que mes chansons
De lumière
Vous paraissent de l'encre et du papier.
Vous ne le comprenez pas - Mais il faut
Que vous le compreniez.

Rien d'autre.
Et maintenant -
C'est toujours pareil, je chante pour vous émouvoir.
Je chante malgré moi.
Quoi que je chante - que ce soit l'amour,
Ou la mort.

Je suis un bouffon, maintenant.

1920

ՀԵՌԱՑՈՒՄԻ ԽՈՍՔԵՐ

Իմ աչքերի մեջ այնքան կրակներ եմ մարել ես
Եվ հոգուս մեջ, հուսահատ, այնքան աստղեր եմ մարել:
Կյանքս, որ հուշ է դարձել, հեռանալիս չանհոծես.
Կյանքս կանցնի, կմարի - բայց երգս կա, կապրի դեռ:

Կյանքս կանցնի, կմարի, որպես կրակ ճահիճում՝
Աննպատակ ու տարտամ, անմխիթար ու անհույս:
Երգերիս մեջ - դու գիտե՞ս - ինձ ոչ ոք չի ճանաչում՝
Կարծես ուրիշն է երգում կապույտ կարոտը հոգուս:

Հավիտյան գոց ու անխոս՝ թափառել եմ ու լռել.
Ոչ ոք, ոչ ոք չգիտե՞ արդյոք ի՞նչ է կյանքս, ես.
Միայն գիտեն, որ կյանքում ինչ-որ երգեր եմ գրել,
Ինչպես գիտեն, որ դու կաս, որ սիրում է մեկը քեզ:

Ես երգել եմ քո հոգին, քո ժպիտը լուսավոր,
Քո աչքերի, քո դեմքի տխրությունը սրբազան.
Կյանքս թողած անհունում - ես երգել եմ սերը խոր
Ու կարոտը թևերիս, որ երբեք քեզ չհասան...

Մոտենում է, քույր իմ, ախ, իրիկունս միգամած.
Ես ի՞նչ անեմ, որ հոգիս չհեծկլտա կարոտից.
Ինչպե՞ս, ինչպե՞ս ընդունեմ կյանքիս բաժակը քամած,
Որ ձեռքերս չդողան, որ օրերս ներեն ինձ:

Գուցե հանկարծ կասկածեմ, չհավատամ ինքս, ես,
Ու սուտ թվա իմ հոգում քո կարոտը սրբազան...
- Ինչ էլ լինի, քույր իմ, քույր, հեռանալիս չանհոծես
Խեղճ կարոտը թևերիս, որ երբեք քեզ չհասան...

1917

PARTING WORDS

I have put out so many fires in my eyes
And so many stars have I put out in my desperate soul.
Don't curse my life as you leave - it's just a memory now,
My life will pass and fade away, but my song will live on.

My life will pass and fade away like a fire in a swamp,
Inconsolable and dull, without hope, without aim.
In my songs no one recognizes me, you know,
As if it were another singing the blue longing of my soul.

Forever mute and estranged, I have wandered in silence.
No one, no one knows who I am, what my life is about.
All they know is in my life I have written a few songs,
As I know that you exist, as I know that you are loved.

I have sung to your soul, to your luminous smile,
To the sacred sadness of your eyes and your face.
My life abandoned in infinity, I have sung the profound love
And the longing of my arms that could never reach you.

Oh, sister, my foggy evening is coming closer,
How can I stop my longing soul from weeping?
How, how can I accept the drained cup of my fate,
So that my hands do not shake, so that my days forgive me?

And what if suddenly I start doubting myself,
And my sacred longing for you begins to feel like a lie?
Whatever happens, sister, don't curse, when we part,
The pitiable longing of my arms that could never reach you.

1917

MOTS D'ADIEU

J'ai éteint tant de feux dans mes yeux,
Et j'ai éteint tant d'étoiles dans mon âme en détresse.
Ma vie n'est qu'un souvenir, ne la maudis pas en partant.
Ma vie passe et s'éteint – mais mon chant vit et demeure.

Ma vie passe et s'éteint comme un feu-follet dans un marais,
Sans but aucun, incertaine, inconsolable, sans espoir.
Personne ne me reconnaît dans mes chansons, le sais-tu?
Comme si un autre que moi avait chanté le bleu désir de mon âme.

Seul à jamais, sans paroles, j'ai erré et me suis tu,
Personne, personne ne sait ce qu'est ma vie, ce que je suis.
On ne sait que j'ai écrit quelques chansons dans ma vie,
Comme je sais que tu existes et que quelqu'un te chérit.

Moi, j'ai chanté ton âme, la lumière de ton sourire,
Et la tristesse divine de ton visage et tes yeux.
Ma vie laissée à l'infini – j'ai chanté l'amour profond,
Et le pauvre élan de mes bras qui ne t'ont jamais atteinte.

Voilà, ma sœur, que vient mon soir couvert de brume.
Comment vais-je étouffer les sanglots lourds de mon âme.
Comment vais-je accepter la coupe vidée de ma vie,
Pour que mes mains ne tremblent pas et que les jours me ménagent?

Et si jamais je doute, et n'y crois plus moi-même,
Si mon désir de toi, ce feu sacré, ne semble plus que du mensonge...
- Quoi qu'il arrive, ô ma sœur! ne maudis pas en partant
Le pauvre élan de mes bras qui ne t'ont jamais atteinte.

1917

ՊԱՏԱՀԱԿԱՆ ԱՆՑՈՐԴԻՆ

Մենք երկուսս էլ, մենք երկուսս էլ անվերադարձ աշխարհում
Ապրում ենք, կանք, գնում ենք - ո՞ր, միևնույնն է մեր հեռուն:

Կանգնիր, անցորդ: Կանգնիր: Նայենք: Նայենք իրար - գուցե
մենք

Հանկարծ ժպտանք՝ չճանաչված մի բարեկամ ճանաչենք:

Կանգնիր, կանգնիր, ո՞ր ես վազում, ո՞ր ես գնում դու
արագ.

Աչքերիս մեջ գուցե գտնես ոսկեժպիտ մի կրակ:

Դու ուրախ չե՞ս, որ ապրում ենք - ու հանդիպել ենք իրար,
Ո՞ր ես անցնում անվերադարձ, որպես անդարձ ճանապարհ

Ե՛ս էլ կանցնեմ - տրտում մենակ, - ու կզնամ իմ անժայր
Երագ - ճանփան, որով դու էլ այս իրիկուն կույր անցար:

Դու կույր անցար, չնայեցիր ու հեռացար մշուշում.

Բայց ես երկար քո անծանոթ, օտար դեմքը կհիշեմ:

Կհիշեմ, որ դեգերումիս ճանապարհին, որպես հուշ,
Մեկը անցավ, իրիկուն էր. իրիկուն էր ու մշուշ...

1916

TO A CHANCE PASSERBY

The two of us, the two of us, in this world with no return,
Live, exist, wherever we go - the destination is the same.

Stop, traveler, wait, let's look at each other, stay there, stand.
Maybe we'll smile all of a sudden, as we recognize an unknown
friend.

Stop. Stop. Where are you rushing, where are you running so fast?
Look closely, perhaps you will find the fire of a golden smile in my
eyes.

Aren't you glad that we both lived and met each other in this world?
Stop, don't go away, like an unreturning one-way road.

I too will go on, lonely and sad, down the endless path of dreams
Which this evening you have followed blindly and disappeared in the
mist.

You passed by, you didn't look and disappeared in the haze,
But I will forever remember your unfamiliar, unknown face.

I will remember that somebody crossed my wandering path.
A chance passerby. It was evening, it was evening, misty and sad.

1916

À UN PASSANT DE HASARD

Tous les deux, tous les deux, dans ce monde sans retour,
Nous vivons, nous existons – notre ailleurs est le même.

Arrête-toi, passant. Arrête-toi. Regardons-nous, l'un l'autre,
A travers nos sourires peut-être reconnaitrons-nous un ami inconnu.

Arrête! Arrête! Où cours-tu ? Où vas-tu dans ta hâte?
Peut-être trouveras-tu dans mes yeux le feu d'un sourire d'or.

N'es-tu pas heureux que nous vivions et que nous nous soyons rencontrés.
Où passes-tu sans retour, sur ce chemin sans espoir de retour?

Je passerai moi aussi tout seul, triste, et je suivrai mon infini
Chemin de rêve, que toi aussi, ce soir, aveuglément tu as suivi.

Tu l'as suivi aveuglément, tu t'es éloigné dans la brume.
Et je me rappellerai longtemps ton visage distant et inconnu.

Je me rappellerai comme un souvenir que dans mon errance,
Quelqu'un m'a croisé dans la brume, il faisait noir, il faisait soir.

1916

ՔԱՄԻՆ

Քամին,
Աշնան քամին
Թռցնում է դեղին նժույգները իրա:

Ինչ-որ մի տեղ հիմա
Հավաքել է ի մի
Ու փչում է աշնան հոգեվարքի ժամին
Իր ահռելի հոգին մի վիթխարի բերան:

Քամին,
Աշնան քամին
Հռնդում է հիմա.
Փռչու հսկա դեգեր փախցնում են իրար
Սարսափահար դարձած նախիրների նման:

Քամին,
Աշնան քամին...
Քաղաքը գորշ ու մութ:
Ամեն անցորդ դեղին գառանցանք է հիմի՛,
Որ իրիկվա մեզին երազվել է քամուն:

Փողոցները երկար,
Ու ձանձրալի, աշնան անձրևների նման,
Փողոցները, որ կան,
Փողոցների ներկան,
Փողոցները՝ դաժան, անհրապույր, չարկամ, -
Որքան, որքան, որքան ահավոր են հիմա:

Քամին,
Աշնան քամին
Մոլորվել է այստեղ.
Մահվան սարսուռ առած վիրավոր է նա մի:
Ու կարող է հիմա ամեն արգելք քանդել
Քամին,
Աշնան քամին...

Հռնդում է,
Փնչում,
Ահեղացունց ցնցում ցուցանակները չոր.
Ջրնգում են ահից պատուհաններն հնչուն,
Ու թռչում է քամին, - երկաթաթև թռչուն, -
Չարհուրելի, զազիր փողոցների միջով...

Խելապտույտ, անմարդ փողոցներում կորած,
Չարհուրելի ոխով ու զայրույթով իրա,
Որպես ոսոխ տեսած մի վիթխարի հովազ,
Հայացքներում՝ փոշի և արնամուժ ավազ, -
Քամին, աշնան քամին հարձակվում է ահա
Անօգնական կբած բուլվարների վրա:

Օ, բուլվարի հիվանդ ծառերը որք ու խենթ,
Ցնցողներ հազած պառավների նման, -
Ծվատում են նրանք դեղին մազերն իրենց,
Գլուխները ցնցում ու մորմոքում հիմա:

Ծառերը ծեր, հիվանդ,
Ծառերը ծուռ ու չոր,
Մուրացկանի նման ծառերը խեղճ ու մերկ.
Քամին ծեծում է ծեր գլուխները նրանց
Ու ճչում է մահվան չարագուշակ ճչով, -
Երբեք,
Երբեք,
Երբեք...

Օ, գթացք հիմա.
Այդ ծառերին՝ խաչված բուլվարներին ամա,
Օ, փրկեցե՛ք նրանց հարվածներից քամու,
Որ բերում է նրանց մահվան մորմոք ու մահ:

Օ, գթացք հիմա.
Լսեք, լսեք, լսեք. -
Այս ահռելի, դաժան հոգևարքի ժամին՝
Պիտի դառնա, որ ծեր հոգիները խուժե -
Քամին,
Աշնան քամին...

1922

THE WIND

The wind,
The autumn wind
Lashes its yellow stallions.

Somewhere now
It gathers its weighty soul
And in the autumnal agony
Draws its last breath from a gigantic maw.

The wind,
The autumn wind
Rumbles.
And giant heaps of dust chase each other
Like herds in panic.

The wind,
The autumn wind...
The city dark and gloomy.
Every passerby is a yellow delirium
Dreamed by the wind in the evening haze.

The endless streets,
Monotonous like the autumn rains,
The streets in rows,
The streets here, now,
The cruel streets, repugnant and evil,
They are so, so, so frightening now!

The wind,
The autumn wind
Is wandering lost.
And wounded by fear of death
It might destroy every barrier,
The wind,
The autumn wind ...

Rumbles,
Snorts,
Frenetically shakes the tarnished signboards,
Windows echo fearful and strident vibrations,
And the wind flies like an iron winged bird
Through dreadful and loathsome streets.

Swirling, lost in abandoned streets,
Full of awesome revenge and fury,
Like a giant panther tracking his foe,
Dust and bloodstained sand in its glances,
The wind, the autumn wind now assails
The boulevards helplessly crouched.

Oh, the sick and orphaned trees on the
boulevard,
Like old women in rags,
Lacerate their yellow tresses
And shake their heads with grief!

The trees sick and old,
The trees crooked and dry,
The trees poor and stripped like beggars:
The wind strikes their decrepit heads
And shrieks the ill omen of death.
Never,
Never,
Never!

Oh, have mercy now
On these trees crucified on the desolate
boulevards,
Oh, save them from the blows of the wind
That bring them mortal grief and death!

Oh, have mercy now!
Listen, listen, listen...
In this awful and cruel hour of agony,
It will return and invade your souls -
The wind,
The autumn wind.

1922

LE VENT

Le vent,
Le vent d'automne,
Débande ses jaunes étalons.

Quelque part maintenant
Il les a réunis
Et il souffle dans l'agonie automnale
Son âme immense, d'une gueule colossale.

Le vent,
Le vent d'automne,
Gronde maintenant.
De grandes piles de poussière se chassent les
unes après les autres
Comme des troupeaux en panique.

Le vent,
Le vent d'automne...
La ville fade et sombre.
Chaque passant est un jaune délire maintenant,
Qui, dans la brume du soir, fut rêvé par le vent.

Les rues qui s'étirent,
Monotones comme des pluies d'automne,
Les rues qui sont là,
Les rues à présent,
Les rues affligeantes, sans charme, sans merci,
Sont tellement, tellement épouvantables!

Le vent,
Le vent d'automne,
S'est égaré quelque part.
Le vent effarouché d'une plaie mortelle,
Pourrait détruire toute barrière,
Le vent,
Le vent d'automne...

Renifle,
S'ébroue,
Ebranle, terrifiant les enseignes revêches,
Les fenêtres résonnent en vibrant d'effroi,
Et le vent s'envole - oiseau aux ailes d'acier -
Dans les rues redoutables et repoussantes...

Tourbillonnant, dans les rues dépeuplées,
Avec sa rancune et sa rancœur,
Comme une panthère géante à l'affût de sa proie,
Avec de la poussière et du sable,
Le vent, le vent d'automne envahit, le voilà,
Les boulevards blottis, vulnérables.

Oh! les arbres des boulevards, orphelins, aliénés,
Vêtus de vieux haillons,
Lacèrent leurs tresses jaunes,
Et se lamentent en secouant leurs têtes.

Les arbres vieux et malades,
Les arbres tordus et desséchés,
Les arbres, comme des mendiants, pauvres et
nus.
Le vent frappe leurs têtes décrépités,
Et rugit d'un cri de mauvais augure,
Jamais,
Jamais,
Jamais!

Oh! ayez pitié maintenant
De ces arbres crucifiés sur les boulevards
désolés,
Oh! sauvez-les des rafales du vent,
Qui leur apporte le chagrin mortel et la mort.

Oh, ayez pitié maintenant!
Écoutez, écoutez, écoutez -
En cette terrible heure d'agonie,
Il va retourner pour envahir vos âmes -
Le vent,
Le vent d'automne

1922

ՍՈՆԵՏ ԱՆԿՇՈՒՆԻ

«...Մենակ պիտի դու ընդունես
Գողգոթան այս նոր»
Վահան Տերյան

Ո՞ր ես արդյոք քո սև Խաչափայտը
տանում,
Ով տառապյալ Հոգիս: - Կա՞ Գողգոթա նոր
արդ,
Որ բարձրանա հպարտ, - և լուսազարդ
Քո պսակին նայեն մարդիկ սիրով անհուն:

Իբրև Հիսու՞ս ես դու արդյոք լյառ
բարձրանում, -
Թե՞ - ավագակ ես լոկ դու մահապարտ...
Պիղատո՞ւ է արդյոք այսօր ամեն մի մարդ,
Որ քո հանդեպ ծեռքերն է լվանում...

Էլ ի՞նչ պսակ լուսե, - էլ Գողգոթա
Ինչպե՞ս ելնես, Հոգիս, չարչարանքով
հոժար -
Երբ չգիտես ինքդ էլ՝ Հիսու՞ս ես, թե
Հուդա...

Ունե՞ս արդյոք, Հոգի՛ս, անագորույն նժար,
Որ նժարես այս խոհն անկշռելի -
Չարչարանքիդ այս սՏ կեսգիշերին...

18-19.VII. 1936
գիշեր-առավոտ-ցերեկ

IMMEASURABLE SONNET

“... Will you accept alone
This new Golgotha?”
Vahan Terian

Where are you carrying your black wooden
Cross,
Oh, my tormented Soul? - is there a new
Golgotha
That you shall mount with pride - and people
will admire
Your luminous crown with infinite love?

Are you ascending the mount today as
Jesus?
Or... just a robber condemned to death?
Is every man today a Pilate
Washing his hands of you?

What crown of light?... And how will you, my
Soul,
Ascend Golgotha with a willful passion,
when, alas,
You don't know yourself whether you are
Jesus or Judas?

And do you have, my Soul, the ruthless
scales
To measure this immeasurable thought -
In this black midnight of your suffering...

18-19. VII. 1936
night-morning-day

SONNET INSONDABLE

"... Vas-tu accepter tout seul
Ce nouveau Golgotha..."
Vahan Terian

Où portes-tu ta Croix noire?
Ô! mon Âme tourmentée. Vers quel nouveau
Golgotha?
Pour que tu montes fière - et que les gens
admirent
D'un amour infini ta couronne parée de lumière.

Est-ce en tant que Jésus que tu gravis ce
calvaire,
Ou n'es-tu qu'un larron condamné à mort...
Est-ce qu'aujourd'hui chacun est un Pilate
Qui se lave de toi les mains?

Mais quelle couronne de gloire? - comment
gravirais-tu Golgotha,
Mon Âme? - même si tu es prête aux supplices,
Quand tu ne sais toi-même si tu es Jésus ou
Judas.

Est-ce que tu possèdes, mon Âme, l'inexorable
sonde
Pour mesurer cette pensée insondable -
Dans cette lugubre nuit de ta souffrance.

18-19 VII. 1936
nuit-matin-jour

ԻՄ ԱՆՑԱԾ ՕՐԵՐԻ ՊԵՍ

(Առավոտ)

Իմ անցած օրերի պես,
Հնացած օրերի պես,
Ես արդեն հեռացել եմ,
Հնացել եմ ես.
Ես արդեն հնացել եմ,
Ես արդեն հիմա ծեր եմ,
Հեռացել ու անցել եմ, -
Ծերացել եմ ես:

Բայց այս վառ օրերի մեջ,
Երբ հողմերն աղմկում են,
Աղմկում ու երգում է
Անցած սիրտը իմ.
Ես կարծես դեռ ջահել եմ,
Ինձ կարծես հմայել են,
Եվ իմ սիրտը պահել է
Կրակները հին: -

Ախ, գիտեմ, որ այդ դու՛ ես,
Որ այդպես հմայում ես,
Հմայում ու նայում ես
Օրերում այս հուր.
Դու անուշ կարկաչում ես,
Դու կանչող մի հնչյուն ես,
Կարկաչում ու կանչում ես,
Չգիտեմ, թե ու՞ր:

Եվ հիմա ես լսում եմ,
Որ վերջին երազում իմ
Քո կարոտն սկսում է
Իմ հոգին հուզել -
Ես կարծես ծերացել եմ,
Ծերացել ու դարձել եմ
Ու նորից երազել եմ
Կարոտանք ու սեր...

1918-1920

LIKE MY PAST DAYS

Like my past days,
Like my weary days,
I am already gone,
I am already aged.
I am worn-out,
I am old now,
I am gone away and passed on,
I have grown old.

But in these shiny days
When the winds bluster,
My old heart also
Blows and sings.
As though I were still young,
As though I were enchanted,
And my heart has kept alive
The flames of the past.

Yes, I know, it is you
Who is enchanting me
And charming and gazing
In these fiery days.
You are whispering sweetly,
A siren song that enchants me,
Whispering and calling to
I don't know where.

And now I can feel
That in my last dream
My soul starts longing
For you again.
As though I grew old,
And came back again
And dreamed as before
Of longing and love.

1918-1920

COMME MES JOURS PASSÉS

Comme mes jours passés,
Comme mes jours vieillis,
Je me suis éloigné,
J'ai vieilli déjà.
J'ai déjà vieilli,
Je suis vieux maintenant.
Je suis loin et passé,
Je suis vieux déjà.

Mais en ces jours ardents
Quand les tempêtes soufflent,
Souffle et chante encore
Mon cœur en retraite.
Comme si j'étais jeune,
Comme si j'étais charmé,
Et mon cœur avait gardé
Les feux du passé.e flames of the past.

Oh! je sais que c'est toi,
C'est toi qui me charmes,
Me charmes et me couves
En ces jours ardents.
Tu chuchotes doucement,
Tu m'enchantes de ton chant,
Tu chuchotes et m'appelles,
Je ne sais pas où.

Et maintenant j'entends
Dans mon dernier rêve,
Ton absence commence
A émouvoir mon âme.
Comme si j'étais vieux
Et que j'étais revenu
Pour rêver comme avant
Au désir et à l'amour.

1918-1920

ՆՐԱԿԻՐԹ Լ.- ԻՆ

Ջեր հոգին - նուրբ, օսլայած,
Ջեր սիրտը - գուրգուրած շնիկ:
Իսկ ես սովորել եմ, գիտե՞ք,
Որ հոգիս փողոցում քնի:

Ջեր հոգին նուրբ, օսլայած:
Ներեցեք... բայց կարո՞ղ է նա
Հետևի ոտքերին նստած -
Մինչև լույս կարոտից ոռնալ:

Կարո՞ղ է արդյոք փողոցում,
Ուր անգամ արգելվում է ծեծվել,
Առաջին հանդիպած շան հետ
Միանալ, այսինքն - կցվել:

Ախ, օրհորդ, ներեցե՛ք: Դե, ես
Որքան էլ բանաստեղծ լինեմ,
Բայց ձեզ պես բարեկիրթ, ձեզ պես...
Իմ հույզերը զապել չգիտեմ:

Ես առանց քաշվելու, գիտե՞ք,
Կաղը, երբ գարուն բացվի,
Կթողնեմ, որ հոգիս շրջիկ
Ամենքի հետ միանա - կցվի:

Թեկուզ ես գիտեմ, որ նա
Երբ հետո հագեցած երգե -
Իմ հոգու լնդերքի վրա
Կբացվեն կապույտ վերքեր:

Բայց էլի, մայթերի վրա
Փնտրելով փշրանքներ հացի -
Կվատնեմ իմ հոգին շալլ,
Կտամ շներին փողոցի:

Պոռնիկները ինձ քույր կղառնան,
Շները - եղբայրներ անգին, -
Բայց ափսոս որ օտար կմնա
Ջեր մաքուր, օսլայած հոգին...

1921

TO ELEGANT MISS L.

Your soul - so delicate, starched,
Your heart - a spoiled little bitch.
While my soul is, you know,
Used to sleeping in the streets.

Your soul - so delicate, starched.
Pardon me, but do you think
That it could sit on its paws
And howl from longing til dawn?

Could your soul in the streets -
Where one is not even allowed to fight -
With the first dog it meets
Unite, that is mate?

Oh, pardon me, Miss; but although
I am a poet, as you know,
I cannot restrain my feelings
With good manners, as you do.

And without being shy, tomorrow,
As soon as spring starts blooming,
I will let my wandering soul
Unite, that is mate with all.

Although I know that later
When sated it will start to sing,
On the gums of my soul
Blue sores will appear.

However, again on the sidewalks,
Looking for crumbs of bread,
I'll squander my generous soul
And give it to the stray dogs.

Whores will become my sisters,
Dogs - my beloved brothers,
But what a pity you'll remain stranger to me
With your spotless, your starched soul.

1921

À L'ÉLÉGANTE L.

Votre âme – délicate, amidonnée
Votre cœur - un chiot cajolé.
Tandis que mon âme, vous savez,
Peut bien dormir dans les rues.

Votre âme – délicate, amidonnée,
Mais excusez... pourrait-elle,
Campée sur ses pattes de derrière,
Hurler de désir jusqu'à l'aube.

Ou bien, pourrait-elle dans la rue,
Où il est même interdit de se battre,
S'unir avec le premier chien venu,
S'unir - je veux dire s'accoupler?

Oh ! excusez-moi, Mademoiselle,
Même si je suis poète, je ne pourrais,
Comme vous le faites, poliment,
Retenir, comme vous, mes émotions.

Demain, sans la moindre pudeur,
Quand le printemps reviendra,
Je laisserai mon âme errante
S'unir, s'accoupler avec tout un chacun.

Même si je sais que plus tard
Quand elle chantera repue,
Des plaies bleuâtres fleuriront
Sur les gencives de mon âme.

Mais toujours sur les trottoirs,
En cherchant des miettes de pain,
Je gaspillerai mon âme prodigue,
Je la donnerai aux chiens.

Les putains seront mes sœurs,
Les chiens - mes frères adorés,
Mais votre âme délicate, amidonnée,
Hélas, me sera toujours étrangère.

1921

ԿԱՊՈՒՅՏՈՒ

Կապույտը հոգու աղոթանքն է, քույր,
Կապույտը - թախիծ.
Կապույտը - կարոտ թափանցիկ, մաքուր,
Ու հստակ, ու ջինջ:

Կապույտը քրոջ աչքերի անհուն
Առավոտն է թաց:
Կապույտում հոգիս մի հին իրիկուն
Անգոր հեծկլտաց:

Կապույտը ծեզին աղոթքի կանչող
Ղողանջն է զանգի:
Կապույտը - արցունք, ու կապույտը - ցող
Հոգու, երկնքի:

Կապույտում անսուտ խոսքեր են հոսում
Երկնքից - երկինք:
Հոգիս - Կապույտի լաբիրինթոսում
Սրբացած կնիք:

Այն, որ չի եղել, որ պետք է լինի
Մանկական սրտում -
Հոսում է, որպես լուսավոր գինի -
Հոգու կապույտում:

1916-1917

BLUE

Blue is the soul's prayer, sister,
Blue is sorrow.
Blue is longing, transparent and pure,
Clear and immaculate.

Blue is the morning, infinite and wet,
Of a sister's eyes.
My soul in the blue helplessly wept
On one ancient night.

Blue is the ringing of the morning bell
Calling for prayer.
Blue is a tear, blue is the dew
Of soul and heaven.

Through blue true words flow
From heaven to heaven.
In the labyrinth of the blue
My soul - a sanctified seal.

Whatever is not, and has yet to come
In a child's heart-
Flows like wine of light
In the blue of the soul.

1916-1917

BLEU

Bleu est la prière de l'âme, ma sœur,
Bleu est le chagrin,
Bleu est le désir pur et transparent,
Et clair, et limpide.

Bleu est le matin mouillé
Des yeux de ma sœur, infinis.
Dans le bleu, une nuit d'antan, mon âme
Sanglota d'impuissance.

Bleu est le carillon du matin,
Qui appelle à la prière.
Bleu la larme, bleu la rosée
De l'âme et du ciel.

Dans le bleu coulent de cieux en cieux
Des mots sans mensonge.
Mon âme est un sceau sanctifié
Dans le labyrinthe du bleu.

Ce qui n'est pas encore advenu
Mais adviendra dans le cœur de l'enfant
Coule comme un vin limpide
Dans le bleu de l'âme.

1916-1917

ԽՐԱԽՃԱՆՔ

Ջահերն այնտեղ կասկածոտ
Ակնարկում են ու թարթում
Գիշերային, սակայն տոթ
Հնայքների թակարդում:
Այնտեղ շքեղ ու փարթամ,
Մանեկենի պես կիներ
Ծախում են սուտ խենթության
Թիթեղածայն ոսկիներ:
Ու մեռելի նման պաղ
Մարդիկ հոգնած ու դեղին
Այնտեղ լցվում են ուրախ
Խենթությունով հրեղեն:
Անցի՜ր մենակ: - Կես մթում,
Ակնարկներով հրակեզ,
Հնայքներով անպատում
Կհմայեն նրանք քեզ:
Նստի՜ր այնտեղ: Թող նրանք
Սրահներում իրենց մութ
Վառեն կարմիր մի կրակ՝
Անհրապույր ու աղոտ:
Անհարազատ թող լինին
Կարոտակեզ քո հոգում, -

Թե երգերը նրանց հին,
Թե ժպիտները բեկուն:
Հանոզի՜ր քեզ, որ վաղուց
Դու երագել ես սիրով
Ծախվող հմայքը այդ ուշ
Խրախճանքի ու սիրո:
Ու կդառնա ողջը - սուտ,
Ու գինու պես քո հոգին
Հորդ՝ կթափվի նրանց մութ
Ու մահահոտ հատակին:
Ու էլ մինչև առավոտ
Պիտի մնաս նրանց հետ՝
Խրախճանքում նրանց տոթ,
Անիմաստ ու անհեթեթ:
Էլ հանձնվի՜ր մինչև լույս,
Որպես գերի մի անկամ -
Խրախճանքին նրանց ուշ,
Անուրախ ու արնաքամ:
Ոչ մի վայրկյան չկասե
Թող հորձանքը ժրաջան -
Հարբի՜ր սիրով նրանց սև,
Որ շրթերդ չճչան...

THE FEAST

*The torches hesitantly
Wink and signal
In the nocturnal yet viscous
Ambushes of enchantment.
There, stylish and corpulent
Women, like mannequins,
Display the tinny jewels
Of false madness.
Men tired and pale,
And cold like corpses
Are filled with joyful
And fervent madness.
Pass through alone! In the half darkness
With their passionate gestures,
Unspeakable enchantments
They will enchant you.
Sit down there. Let them,
In their dark halls,
Burn a red fire,
Charmless and dim.
May their old songs
And their fragile smiles

Remain estranged
From your longing soul.
Pretend that long ago
You eagerly dreamed of
This belated feast and love,
This enchantment - for sale.
And all will turn into lies,
And your soul like wine
Will inundate their black
And morbid floor.
You will be there
Until morning with them,
In their suffocating feast,
Meaningless and absurd.
Now surrender until dawn
Like a frail captive
To their belated feast,
Joyless and slaughterous.
May the wild whirlwind
Never stop even for a blink,
Get drunk from their gruesome love
Lest your lips part in a scream..*

FESTIN

*Les torches, là-bas, indistinctes
Clignent de l'œil et vacillent
Dans le piège nocturne
Et suffocant des sortilèges.
Là-bas, des femmes splendides
Et bien en chair comme des mannequins
Vendent de la fausse folie
Comme quincaille dorée.
Et froids comme des cadavres,
Des hommes pâles et fatigués
S'inondent d'une joyeuse
Et flamboyante folie.
Passe solitaire. - Dans la pénombre,
Avec des clins d'œil passionnants,
Avec des charmes indicibles
Elles t'envoûteront.
Assieds-toi là-bas. Laisse-les
Dans leurs salles sombres,
Allumer un feu ardent,
Trouble et sans charme.
Bien que leurs vieilles chansons,
Bien que leurs fades sourires,
Restent étrangers
A ton âme brûlée de désirs,

Convaincs-toi que tu rêves
Depuis longtemps, de tout ton cœur,
A ce charme de l'amour vénel,
A ce festin tardif.
Et tout deviendra mensonge,
Et ton âme comme du vin
Se répandra sur leur plancher
Impur et morbide.
Et jusqu'au matin
Tu resteras là,
Dans leur festin suffocant,
Insensé et absurde.
Tu te soumettras jusqu'à l'aube,
Comme un veule captif
A leur festin prolongé,
Maussade et vampire.
Que jamais, même pour un instant,
Le tourbillon affolé ne s'arrête.
Enivre-toi de leur amour perfide,
Pour que tes lèvres ne hurlent pas!*

ԼՈՒՍԱՄՓՈՓԻ ՊԵՍ ԱԳՋԻՎ

Լուսամփոփի պես աղջիկ՝ աստվածամոր
աչքերով,
Թոքախտավոր, թափանցիկ, մարմինի պես
երագի,
Կապույտ աղջիկ, ակաթի ու կաթի պես
հոգեթով,
Լուսամփոփի պես աղջիկ...

Ես ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ, որ չմեռնի իմ
հոգին,
Որ չմարի իմ հոգին քո ակաթե աչքերում.
Ես ի՞նչ անեմ, որ մնա ծիածանը երեքգույն,
Որ չցնդի, չմարի իմ հոգու հեռուն...

Լուսամփոփի պես աղջիկ՝ աստվածամոր
աչքերով,
Թոքախտավոր, թափանցիկ, մարմինի պես
երագի,
Կապույտ աղջիկ, ակաթի ու կաթի պես
հոգեթով,
Լուսամփոփի պես աղջիկ...

1916-1917

GIRL LIKE A LAMPSHADE

*Girl like a lampshade – with the Virgin Mary's
eyes,
Tubercular, transparent, a body in a dream,
Girl – blue, agate, milky, enchanting,
Girl like a lampshade ...

What can I do, what can I do so that my soul
doesn't die,
So that my soul doesn't burn out in your
agate eyes?
What can I do to keep the rainbow tricolored,
To keep the depth of my soul from fading
and burning?

Girl like a lampshade – with the Virgin Mary's
eyes,
Tubercular, transparent, a body in a dream,
Girl – blue, agate, milky, enchanting,
Girl like a lampshade ...

1916-1917*

FILLE COMME UN ABAT-JOUR

*Fille comme un abat-jour, aux yeux de Vierge
Marie,
Tuberculeuse, transparente, comme un corps de
rêve,
Fille bleue, lactée, d'agate, enivrante,
Fille comme un abat-jour...

Que ferai-je, que ferai-je que mon âme ne
meure pas?
Que mon âme ne s'éteigne dans tes yeux
d'agate ?
Que ferai-je pour que l'arc-en-ciel garde toujours
ses trois couleurs?
Pour que le lointain de mon âme ne s'éteigne ni
ne s'efface?

Fille comme un abat-jour, aux yeux de Vierge
Marie,
Tuberculeuse, transparente, comme un corps de
rêve,
Fille d'agate, bleue, lactée, enivrante
Fille comme un abat-jour...

1916-1917*

ՇԱՄԻՐԱՄ

Նորից՝ անմար կարոտով գգվանքների ու հրի՝
Դու եկել ես տեսնելու քաղաքները Նաիրի:

Անհրապույր ու կանաչ քո աչքերը մեռելի
Ցանկությունով հրահրած՝ անհագ վառվել են էլի:

Դու անցնում ես ու տեսնում քաղաքները հիմա այն,
Որոնց տեղ խոտ էր բուսնում, երբ դեռ ապրում էր Արան:

Այլ է աշխարհը հիմա, այլ է հիմա Նաիրին.
Ո՛չ մի արքա էլ չկա, որ չտրվի քո հրին:

Ո՛չ վեճ է էլ հարկավոր, ո՛չ պատերազմ մահառիթ.
Արքաների համար նոր - բավական է մի ժպիտ. -

Միայն ակնարկ մի թեթև - և կտրվեն նրանք քեզ,
Քո հմայիչ ու անթև տարփանքներին հրակեզ: -

Կզան մեկ-մեկ ու սիրով - ու կտանջես նրանց դու
Անհագ կրքի ու սիրո նիզակներով քո հատու:

Եվ այնպիսի՝ տարփանքներ նրանք կտան հիմա քեզ,
Որ կամոքվի քո հոգին կարոտանքից սիրակեզ:

...Բայց կլինի մի գիշեր - ու հմայքով նաիրյան
Կբարձրանա մշուշից մանկաժպիտ քո Արան:

Նորի՛ց հոգիդ անսպիտակ կարոտանքով կվառվի -
Ու սարսափով մի անօգ՝ նորից կելնես դու կռվի:

Եվ որպեսզի չտրվի նա խիստաժետ քո հրին -
Ոտքի կելնե նրա հետ հազարամյա Նաիրին:

Եվ դաշտերում Նաիրի կպարտվի նորից նա,
Կնահանջե գորքը ետ, երկիրը քեզ կմնա:

Նա կմեռնի, որպես զոհ - բայց չէս հաղթի դու նրան.
- Դառն է խորհուրդը սիրո, շամբշոտաշուրթ Շամիրամ...

1920

SEMIRAMIS

*With unquenchable craving for passion and embrace
You have returned to visit the cities of Nairi.*

*Your unattractive and green corpse's eyes
Are flaming again with insatiable desire.*

*You are passing through and seeing those cities
Where there were just weeds at the time of Ara.*

*The world has changed. And Nairi has changed also.
Now every king would give himself to your flame.*

*There is no need for quarrels, no need for deadly battles-
For the new kings just a smile will suffice.*

*Just a small hint - and they will give themselves to you,
To your bewitching, lascivious and feverish love.*

*They will come one by one - and you will torture them
With the sharp arrows of your greedy love and allure.*

*And they will make love to you with such passion
That your soul consumed with desire will heal at last.*

*...But there will be a night, - when, full of Nairian charm,
Your Ara will rise from the mist with his boyish smile.*

*Your desolate soul will burn with desire again,
And you will declare war with bewildered dismay.*

*Lest to succumb to her morbid flame -
The ancient Nairi will rise with him to fight.*

*And in the fields of Nairi again he will fall,
The troops will retreat, and the land will be yours.*

*He will die as a martyr - but you will not defeat him.
Bitter is the mystery of love, you, voluptuous Semiramis.*

1920

SEMIRAMIS

*Avec ton désir affamé de passion, de volupté,
Tu es venue, une fois encore, revoir les villes de Nairi.*

*Tes yeux de morte, verts et sans attrait,
Brûlent de nouveau d'insatiable convoitise.*

*Te revoilà qui repasses et regardes les villes immémoriales
Où il ne poussait que de l'herbe au temps où Ara vivait encore.*

*Le monde a changé et Nairi elle aussi a changé,
Il n'y a plus de roi qui ne céderait à ton charme.*

*Plus besoin de querelles, plus besoin de batailles meurtrières,
Rien qu'un sourire suffirait pour les rois de nos jours.*

*Rien qu'un vague clin d'œil - et ils se donneront à toi,
A tes voluptés ardentes, lascives et impudiques.*

*Ils viendront un à un - et tu les tourmenteras
Avec tes infaillibles flèches de l'amour charnel inassouvi.*

*Ils te donneront de telles jouissances
Que ton âme consumée de désir se verra apaisée.*

*...Mais une nuit -Ara avec son charme nairien,
Se lèvera de la brume avec son sourire d'enfant.*

*Ton âme inconsolée brûlera à nouveau de la même passion,
Et avec un effroi sans recours tu reprendras la guerre.*

*Et pour le garder loin de tes appâts maléfiques,
Le séculaire Nairi tout entier se soulèvera avec lui.*

*Et dans les champs de Nairi il tombera une fois encore,
Les troupes sonneront la retraite, et le pays t'appartiendra.*

*Il mourra comme martyr mais tu ne pourras le vaincre
Il est amer le mystère de l'amour, voluptueuse Sémiramis.*

1920

ՄԱՐԻՈՆԵՏԿԱ

Կամաց, կամաց, կամաց, կամաց,
Ուտքերն հողին, հողին, հողին՝
Եկավ - գնաց, եկավ - գնաց,
Գունատ, դեղին, գունատ, դեղին:

Ձեռքը շարժեց - մեկ վեր, մեկ վար,
Ուտքը խփեց - մեռել, մեռել, -
Առաջ եկավ դժվար, դժվար,
Ձեռքը շարժեց մեկ վար, մեկ վեր:

Ահա՛, ահա - թեքվեց, թեքվեց,
Կընկնի՛, կընկնի... բայց չէ՛. նայի.
Շուրթը շրթից դանդաղ ջրկվեց,
Մնաց մի պահ՝ աչքը մահի:

Ու սուր ճչաց՝ կարծես բռնի
Աչքերն անշարժ, հեռուն գամած. -
Այդպես հոգիս պիտի մեռնի -
Կամաց, կամաց, կամաց, կամաց...

1920

MARIONETTE

*Slowly, slowly, slowly, slow,
Feet on the ground, the ground, the ground,
It came and went, it came and went,
Pale and yellow, pale and yellow.*

*Moving the hand - first up, then down,
Stamping its feet - a corpse, a corpse!
Coming forward, painfully, slow,
The hand falls down then up it goes.*

*Here, here, look, it's bending down,
Will fall, will fall, but no, no, wait,
One lip parts from lip below,
Stops for a moment - staring at death.*

*Then sharply screams, as if by force,
Motionless eyes staring afar,
This is the way my soul will die
Slowly, slowly, slowly, slowly...*

1920

MARIONNETTE

*Doucement, doucement, doucement,
doucement,
Les pieds par terre, par terre, par terre,
Elle va et vient, elle va et vient,
Pâle et jaunâtre, pâle et jaunâtre.*

*Bougeant la main en haut, en bas,
Tapant le pied par terre - cadavre -
Puis s'avançant péniblement,
Branlant la main en haut, en bas.*

*Voilà, voilà - elle se détraque,
Elle va tomber... mais non, regarde.
Ses lèvres s'écartent lentement,
Puis elle s'arrête, l'œil à la mort.*

*Elle a poussé un cri perçant, à contrecœur,
Les yeux figés, fixés au loin,
C'est ainsi que mon âme mourra,
Doucement, doucement, doucement,
doucement.*

1920

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՄ, ՏԵՐ

Շնորհակալ եմ, Տեր, այն ամենի համար,
Որ տվեցիր դու ինձ կյանքում իմ խեղճ. -
Եվ տքնությամբ ազնիվ իմ վաստակած
հացի,
Եվ կանացի մարմնի՝ հացի պես սուրբ, -
Եվ պարտության համար իմ՝ մարտերում
մղած,
Եվ հաղթական ելքի երբեմնակի...
Եվ - վերջապես - ձեռքով քո ինձ շնորհած
Ամենամեծ բախտի և բերկրության համար՝
Մուսանթերի անեղծ մտերմության,
Որ քչերին է այս անագորույն կյանքում
Տրվում իբրև պարգև վերին, իբրև
անհասնելի ընծա...

Ես ցանկությամբ հոժար կտանեի կյանքում
իմ

Տասնապատիկ անգամ ավելի
Եվ դառնություն դժնի, և՛ տառապանք,
Եվ չարչարանք անգամ անագորույն,
Եվ հալածանք ամեն, և անգամ մահ...

1936

I GIVE THANKS TO THEE

*I give thanks to thee, Lord, for all
You gave me in my pitiful life -
For the bread I won with honest sweat,
For the woman's body, blessed as bread,
For the defeats I had in my battles,
For the occasional victories...
And - finally - for the greatest fortune
And grace you bestowed on me with your
hands,
The intimacy of the immaculate Muses
That in this inexorable life is given to few,
A divine award, an inaccessible gift ...
For which I would willfully bear in life
Tenfold times as much
Dreadful bitterness and suffering,
Inexorable tortures and persecution,
And even death.*

1936

JE TE REMERCIE, SEIGNEUR

*Je te remercie, Seigneur, pour tout ce que
Tu m'as donné dans ma pauvre vie.
Pour le pain que j'ai gagné honnêtement
Et pour le corps des femmes, béni comme le
pain,
Pour mes défaites dans les batailles que j'ai
menées
Et pour mes rares triomphes...
Et, finalement, pour la plus grande fortune,
Et le bonheur que tu m'as accordé de tes
propres mains.
L'intimité fidèle des Muses
Qu'à peu de gens, dans cette vie inexorable,
Tu accordes comme un don céleste, une grâce
inaccessible...
J'aurais souffert de bon gré dans ma vie
Dix fois autant
D'amertume atroce, de douleur,
De supplices inexorables,
De persécutions et même jusqu'à la mort...*

1936